ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07, Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր №

02/12.1.1/2496-19
28.03.2019

HETQ.AM-Ի ԼՐԱԳՐՈՂ
ՊԱՐՈՆ ՏԻՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մուրադյան

Ի պատասխան ս.թ. մարտի 21-ին Ձեր գրությամբ ներկայացված հարցադրումներին՝ հայտնում ենք հետևյալը.

Համաձայն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի օգոստոսի 7-ի N 633-Ա հրամանի՝ 2018 թվականի օգոստոսի 8-ից մինչև օգոստոսի 15-ը ներառյալ իրականացվել է 2017թ.-ի և 2018թ.-ի 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի գնման գործընթացի ուսումնասիրություն: Ուսումնասիրության ընթացքում դիտարկվել է գնման գործընթացի համապատասխանությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքին, ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմանը և այլ իրավական ակտերին:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներքին աուդիտի բաժնի կողմից ուսումնասիրվել է «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ մի շարք գնման ընթացակարգեր և վերջիններիս փաստաթղթերի փաթեթների ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են որոշ բացթողումներ և թերացումներ: Նշված ուսումնասիրության արդյունքները տրամադրվել են նաև «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ղեկավարությանը և վերջիններիս հետ քննարկվել են բարձրացված խնդրի լուծման տարբերակները:

Արդյունքում, հաշվապահական հաշվառման հետ կապված հարցերին տրվել է հետևյալ լուծումը.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հրամանով 2017 թվականին հաստատված հաստիքացուցակում ներառված են «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ հաշվապահության բաժնի թվով 5 աշխատակիցներ, որոնց կողմից իրականացվել են

Կատարող՝ Որակի ենթակառուցվածքների զարգացման վարչություն՝ Արաքս Կուրղինյան
Հեռ.՝ 011 597-166

ընկերության հաշվապահական հաշվառման ծառայությունները, այդ թվում՝ նախորդ տարիներին: Համաձայն վերոգրյալ հրամանով հաստատված հաստիքային դրույքաչափերի՝ ընկերության թվով 5 աշխատակիցների աշխատավարձի ամսական ֆոնդը կազմել է 780.000 դրամ (1 գլխավոր հաշվապահ – 300 000 դրամ, 1 մասնագետ – 120 000 դրամ, 2 հաշվապահ – 130 000 դրամ, 1 հաշվապահ գանձապահ – 100 000 դրամ), իսկ տարեկան ֆոնդը՝ 9 մլն 360 000 ՀՀ դրամ:

2018 թվականի փետրվարի 23-ին «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ և «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ միջև կնքվել է «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ կարիքների համար հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման պետական գնման» պայմանագիր: Կնքումից հետո Պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ին վճարվել է ամսական 1 մլն 860.000 ՀՀ դրամ, իսկ տարեկան՝ 22 մլն 320 000 ՀՀ դրամ («Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ թվով 5 աշխատակիցներին և Պայմանագրի կնքումից հետո «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ին վճարվող գումարների տարբերությունը կազմել է 12 մլն 960 000 ՀՀ դրամ):

Տեղեկացնում ենք, որ «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից հաշվապահական հաշվառման հետ կապված հարցերը վերոնշյալ հիմնավորումներով ներկայացվել են ՀՀ կառավարություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ՀՀ կառավարության կողմից որդեգրած կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման՝ այն է հնարավոր քիչ ռեսուրսներով առավելագույն արդյունք ստանալու քաղաքականությունը, հաշվապահական հաշվառման ծառայությունների դիմաց վճարման համար գումար չի նախատեսվել՝ փոխարենը որոշում է կայացվել հաշվապահական հաշվառումը շարունակել իրականացնել նախատեսված հաստիքային միավորների միջոցով, իսկ առաջացած հավելյալ միջոցները ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հրամանով ուղղվել են «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի 127 աշխատակիցների վարձատրության ավելացմանը:

Ինչ վերաբերում է հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպության հետ հաղորդակցությանը, ապա հայտնում ենք, որ ստեղծված իրավիճակի, հնարավոր լուծումների և դրանց հիմնավորումների հստակեցման նպատակով ընկերության ներկայացուցչի հետ տեղի են ունեցել քննարկումներ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ոչ մի պաշտոնյա որևէ ազդեցություն չի ունեցել «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ և «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ միջև կնքված համաձայնագրի չստորագրման հարցում (համաձայնագրի կողմ է հանդիսանում «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ և վերջինիս է վերապահված դրա ստորագրման իրավասությունը):

Հարգանքով՝

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ